

ԱՇԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԸ ԵՂԻՇԵՒԻ «ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ
'ՊԱՏԵՐԱԶՄԻՆ» ԳՐԻՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ՄԻԿԱ ԳՈՒԼԳԱԶԱՐՅԱՆ

V դարի պատմիչ Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գրքում գործածված է շուրջ 4600 բառ՝ 40950 կիրառություններով¹։ Ինչպես այլ հեղինակների, այնպես էլ Եղիշեի գրքում գործածված բառապաշարը բազմատեսակ է ու բազմաբնույթ և, բնականաբար, պարզ (աղատ, բան, գանձ, գեղ, երամ, լեռան, պատասխանի...), բարդ (գալարափող, լեռնադաշտ, պատենագէն, փայտակիր, Բեռնդի. սրախողխող, գալառս գալառս, խառն ի խառն, խիտ առ խիտ, ստէպ ստէպ, մի մի, հրծիգ առնել...), ածանցավոր և բարդ ածանցավոր (ագանութիւն, անհաշտ, բանաւոր, գոշումն, երևելի, զրադաշտական, կեղծաւորութիւն, տգիտաբար, շրջագայութիւն, բարձրաթռիչ, դայեկասնունդ, խուլխողումն...) բառերի ամբողջություն է կազմում։ Այդ բառերի տարբեր տեսակները՝ գործածված ընդհանուր բառապաշարի մեջ, առանձին-առանձին բառային համակարգեր են և, իբրև այդպիսիք, հատկանշվում են իրենց ձևաբանական կառուցվածքով, բառային արժեքով ու նշանակությամբ։

Ածանցավոր բառերի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ դրանք կազմվում են մեկ կամ ավելի արմատների (հիմնական ձևությունների) և մեկ կամ ավելի ածանցների (բառակազմական ձևությունների) միացությամբ և այնպիսի իմաստներ են արտահայտում, որոնք պայմանավորվում են հիմքերի և ածանցների իմաստներով։

Ածանցները, ինչպես հայտնի է, հնագույն ժամանակներից սկսած բառակազմական մեծագույն դեր են կատարել հայոց լեզվում, անվերջ ու անընդմեջ նոր բառեր կերտելով՝ հարստացրել նրա բառապաշարը։ Դրա լավագույն ապացույցն էլ ահա Եղիշեի՝ «զարդարուն ու ծաղկուն ոճով»² գրված «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գիրքն է, որտեղ գործածված շուրջ 4600 բառաբանային բառերի մեջ³ մոտավորապես 1800-ը ածանցավոր բառեր են, ինչպես՝ իմանալի, կտորած, հասակ. ազնուական, ծառայական, փութանալի, խաւարային, խթան, մեծանոց. կապանք, գելարան, մանկանացու, տագնապաւ, վարագաբար, տրտմագին, յուլվագոյն, առհաւատչեայ, ապականելի, անեղ, ձիննեղէն, մայրենի, հինգերորդ, պղնձի, տոնիկ, ինքնին, ռատակիչ, հշմարտիւ, շողին, արարող, գանոյք, հեպով, կցորդ, իւրովի, գլխովին, աւարառու, բնշասիրութիւն, գնայուն, մրմնջումն, ծնունդ, քաջապէս, խորհուրդ, բուրաստան, վայելույ, դժոխք..., այլև՝ անբարբառ, անզգայ, անխաբ, անխաղաղասէր, ապարանութիւն, առաջ, առաւելապէս, բնդդէմ, բնդունայն, բնդունելի, տկարութիւն, ազիտագոյն, տարապարտուց և այլն։

1 Տե՛ս «Հայկական համաբարբառ 5» (Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Բառա-քերականական, Կազմեց և խմբագրեց Լ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ), Երևան, 1972, «Հայկական համաբարբառ 5» (Բնագրային), հ. 1, Երևան, 1974, հ. 2, Երևան, 1978 (բերված օրինակների էջերը կնշվեն տեքստում)։

2 Մ. Արեգյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 338։

3 Այն կարծիքը, թե իբր Եղիշեի գրքում կիրառված է ընդամենը 2200 բառ և կամ՝ «Բառապաշարի կոզմից Եղիշեն աղքատ է» (տե՛ս Վ. Դ. ԱՌԵՔԵԼՅԱՆ, Անկնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981, էջ 194, 195), ամենևին իրականությունը չի համապատասխանում։

Այսպիսով, ինչպես օրինակներն են ցույց տալիս, Եղիշեն գործածել է շատ ածանցներ և դրանցով կազմված բազմաքանակ բառեր, որոնք միաժամանակ նաև V գարում գրաբարում գործող ածանցների ընդհանուր վիճակն են պատկերում:

Ինչպես գրաբարում առհասարակ, այնպես էլ Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» գրքում ածանցները և ածանցավոր բառերը, բազմաբնույթ ու բազմաքանակ լինելով, մեզ ներկայանում են մի քանի տեսակներով: Առաջին հերթին մի առանձին խումբ են կազմում այն ածանցավոր բառերը, որոնց մեջ այս կամ այն ածանցը լիովին մթազնել է իր իմաստը, ձուլվել բառին և դարձել նրա անբաժանելի մասը: Այդպիսի մասնիկները անցյալում եո իբրև գործուն կամ արտադրողական ածանց չեն գիտակցվել և կիրառվել են մի տեսակ արդեն ավարտուն-պատրաստի բառերի մեջ: Իսկ դա նշանակում է, որ զանազան ածանցների իմաստների մթազնմամբ ու զանազան արմատների հետ նրանց «ձուլմամբ» դեռևս հնագույն ժամանակներում առաջ են եկել քարացած կամ մեռած բաղադրություններ, որոնք իրենց կիրառություններն են գտել նաև Եղիշեի գրքում: Եվ իսկապես՝ աղտեղ կան նման շատ բաղադրյալ բառեր, որոնք ածանցի և արմատի, արմատի և ածանցի կամ՝ ածանցի, արմատի և դարձյալ ածանցի միացություն են կազմում: Ըստ որում դրանց մեջ էլ գերիշխող են ածանցի և արմատի ձուլմամբ առաջ եկած ձևերը: Սա, անշուշտ, բացատրվում է նրանով, որ գրաբարյան՝ մանավանդ զ, Ի (յ), ընդ... նախդիրները բառակազմական դեր կատարելով՝ մի շարք դեպքերում նաև արմատի սառ են «դարձել» ինչպես՝ զայրանալ, զառ (զ+հատ), զգալ, զգուշութիւն, զկնի..., յանձն առնել, յանցանք, յանցաւոր, յաջողութիւն, յառակ, յարգել, յարձակումն, յոյժ..., ըմբռնումն (ընդ+բռնումն), ընթեռնուլ (ընդ+թեր+նուլ), ընկալուլ (ընդ+կալուլ), ընկեր (ընդ+կեր), ընտիր (ընդ+տիր), ստունգանել (ստալ+տունկն+ան+ել), այլև՝ անդունդ (<ան+դունդ), համարձակ (<համ+արձակ), հմուտ (<հ+մուտ), հօր (<հ+օր), հպարտ (<հ+պարտ), սփռնալ (<ս+փռնալ / <զ+փռնալ), հանդերձ (<հան+դէպ) և այլն⁴:

Նրկորդ տեղը բռնում են այն բաղադրյալ բառերը, որոնց մեջ վերջին ածանցն է մթազնելել ու ձուլվել արմատին, ինչպես՝ աղքատ (<աղք+ատ), աղիւն (<աղ+իւն), սուղաւ (<աղդ+աւ), անկիւն (<անկ+իւն), աղմուկ (<աղմ+ուկ), աղի (<աղ աղի տղամարդ+ի), արու (<ար+աւր+ու), բոլոր (<բոլ+որ), հառագայթ (<հառագ+այթ), մուր (<մու+որ), հաւառաւիմ (<հաւատ+արիւմ), քակոր (<քակ+որ) և այլն: Եվ վերջապես՝ շատ ավելի քիչ են այն բաղադրյալ բառերը, որոնցում հավասարապես մթազնել են և՛ նախածանցը, և՛ վերջածանցը, ինչպես՝ առագաստ (<առ+ագ+աստ), ամուսին (<ամ համ, կից, միասին+ուս+հնիս. UK՝ ավարժվել, սովորել+ին), անկողին (<ան+կող+ին) և այլն⁵:

Այսպիսով՝ ինչպես գրաբարում առհասարակ, այնպես էլ Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» գրքում ածանցավոր բառերի մեջ հատուկ շերտ են կազմում այն բառերը, որոնք ածանցական մասնիկի հետ միասին ամբողջապես կամ հիմնականում մթազնել են նաև իրենց արմատական իմաստները և դարձել յուրահատուկ պարզ բառեր⁶: Այդպիսի բառերից էլ, հասկանալի է, էպոս տարբերվում են այն ածանցավոր բառերը, որոնց և՛ արմատները, և՛ ածանցական մասնիկները պահում են իրենց ինքնությունը և, իբրև բառակազմական իմաստային միավորներ, որոշակի կապի ու հարաբերության մեջ գտնվելով միմյանց նկատմամբ, բազմազան բառեր են կազմում

⁴ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1—4, Երևան, 1971—1979:

⁵ Նույն տեղում:

⁶ Դրանք «Հայերեն արմատական բառարանում» Հր. Աճառյանը միանգամայն իրավացիորեն ներկայացրել է նաև իբրև ամբողջական ձևեր և ապա՝ կատարել բառակազմական վերլուծություն:

և կամ՝ կիրառվում զանազան բաղադրությունների մեջ: Ըստ այդմ՝ էլ, ի տարբերություն քարացած կամ իրենց ուժը կորցրած ածանց-մասնիկների, Եղիշեի գրքում առանձնանում և մեծ խումբ են կազմում գործուն ածանցները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ նախածանցների ու վերջածանցների: Իսկ սրանք էլ բառակազմական տարրեր գործություն ունեն և իրարից տարբերվում են իրենց՝ ոչ միայն բառում գրաված դիրքով, այլև իմաստներով, բառակազմական արժեքով և ընդհանուր տեսակարար կշռով:

Նախ տեսենք, թե ինչ պատկեր են ներկայացնում նախածանցները Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գրքում: Եղիշեն այդտեղ գործածել է այնքան և այնպիսի նախածանցներ, որոնք հիմնականում ընդհանուր են V դարի գրաբարի համար: Իսկ դա առաջին հերթին նշանակում է, որ երկու դեպքում էլ ավելի քիչ են նախածանցները և դրանցով կազմված բառերը:

Ապրած ու ստեղծագործած լինելով այն ժամանակ, երբ հունարենի ազդեցությամբ հայերենի համապատասխան նախածանցները չէին ստեղծված⁷, Եղիշեն նույնպես ավելի շատ գործածել է ժխտական նախածանցներ. առ-ը⁸ 163 բառում, ինչպես՝ առանց (8 անգամ), առատուած (3 անգամ), առաւղ (7 անգամ), առաւծան (7 անգամ), առօգուտ (3 անգամ), առդադար (14 անգամ), առերկիտ (7 անգամ), առխառն (1 անգամ), առխափան (2 անգամ), առհնարին (13 անգամ), առման (19 անգամ), առմեղ (7 անգամ), առնէջ (6 անգամ), առնուտ (11 անգամ), առտեսանելի (1 անգամ), առփորն (2 անգամ) և այլն. տ-ն՝ 8 բառում, ինչպես՝ տգեղ (1 անգամ), տգէտ (7 անգամ), տգիտութիւն (10 անգամ), տկարութիւն (3 անգամ), տհաճութիւն (1 անգամ), տալ-ը՝ 2 բառում՝ տալարեութիւն (1 անգամ), տալածոյծ (1 անգամ), չ-ն՝ 2 բառում՝ չե (6 անգամ), չիք (23 անգամ), իսկ դժ-ով՝ ոչ մի բառ:

Ժխտական նախածանցներից բացի, որոնց մեջ, ինչպես այժմ, արտակարգ բեղունությամբ աչքի է ընկնում առ-ը, Եղիշեն գործ է ածել նաև մի խումբ բառեր, որոնցում նախածանցի իմաստ են արտահայտում արդեն V դարում նաև նախածանցներ դարձած առ և ընդ նախդիրները, ինչպես՝ առաջ (<առ+աջ), առաւել (<առ+աւել), առողջ (<առ+ողջ), առհաւատչեայ (<առ+հաւատ+իչ+եայ)..., ընդդէմ (<ընդ+դէմ), ընդունայն (<ընդ+ուն+այն), ընդունել (<ընդ+ուն+ել), ընդատուցիչ (<ընդ+ատու+ցի+իչ)⁸ և այլն:

Սրանցից բացի, որ ավելի կարևոր է ու ուշագրավ, Եղիշեի գրքում կան նաև այնպիսի նախածանցներ, որոնք, բնականաբար, ոչ թե հունարենի ազդեցությամբ կամ նմանությամբ, այլ ստեղծվել կամ առաջ են եկել զուտ հայկական հիմքի վրա՝ առանձին արմատների իմաստների փոփոխության հետևանքով⁹, ինչպես՝ բացահայեաց («Մեր բացահայեաց աշօք տեսեալ ոլոյսն երկնաւոր—112», հ. 1, էջ 230), բացատրել («Ուր բացատրեցից զբազմութիւն նետիցն», ն. տ.), գերաւորուր («Ոմանք զգերաւորուր արձակելով իբր յաղբերականաց հոսէին յալաց իրեանց», էջ 59), թերահաւատութիւն («Երկիրդ՝ թերահաւատութեան է նշանակ», էջ 454), համագործ («...որ համագործ էին Հոնաց աշխարհին», հ. 2, էջ 49), համագունդ («Ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա», էջ 49), համահայր («Զիա՞րդ համահարք և միոյ մօր որդիք երկպառակք լինիցին, և ոչ միարանք», էջ 50), փոխադրեալ («...այսպէս փոխադրեալ եղև յերկրէ ի յերկինս», էջ 575), վերաբերել («Եւ ահա վերաբերիմք ընդ քեզ ճախրելով», էջ 505), վերակացու («...իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից», էջ 505), վերակու («Ի բաց հրամայէ առնուլ զոսկեհոռ վերակուն», էջ 511) և մանավանդ՝ տարաբաժին

7 Հր. Աճ առյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 142—145:

8 Այս հիմքով էլ նման կազմությունները ոչ թե բաղադրական բաղադրություններ, այլ զուտ ածանցավոր բառեր պետք է համարել:

9 Եղիշեն ունի նաև ամեն բաղադրիչով կազմված ամենագոր, ամենալաղք, ամենառուր, ամենավառան, ամենիմաստ բառերը, որոնց մեջ, սակայն, այն պահում է իր արմատական իմաստը, և երբեք նախածանց չէ:

(«...և զձեզ օտարախորթս արարեալ՝ տաքաբաժին հանիցէ», էջ 534), տաքա-
 ծամ («Հիւանդութիւնք տաքածամբ և ախտք մահաբերք հանապազ տանշեն
 զմարդիկ», ն. տ.), տաքակոյս («Անդ էր տեսանել զմեծ աղէտ տաքակուսին»,
 ն. տ.), տաքապարտուց («Դուք զուր տաքապարտուց սպանէք զնոսա», ն. տ.)...,
 որոնց մեջ էլ բաց, գեր, թեր, նամ, փոխ, վեր, տաք բաղադրիչները, իսկապես,
 ո՛չ թե արմատական, այլ ածանցական իմաստ են արտահայտում¹⁰:

Այսպիսով՝ Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» գրքում
 գործածված ածանցավոր բառերի մեջ մի շերտ էլ կազմում են գործուն նա-
 խածանցով կազմված բառերը, որոնք, սակայն, մեծ տեսակարար կշիռ չու-
 նենալով, ամբողջությամբ վերցրած 200-ից ավելի չեն: Դրան հակառակ, բո-
 լորովին այլ պատկեր են ներկայացնում և ածանցավոր բառերի մեջ մեծագույն
 տեղ են գրավում վերջածանցավոր բառերը: Իր գրքում, ինչպես հաշվարկում-
 ներն են ցույց տալիս, Եղիշեն գործածել է մոտ 100 վերջածանց՝ շուրջ 1500
 բառարանային բառերում, որոնք այդօրինակ բառերի մեկ երրորդից ավելին
 են կազմում: Իսկ դա ցույց է տալիս, որ ստեղծվելով կամ առաջ գալով հեռա-
 վոր ժամանակներում՝ զանազան ճանապարհներով, վերջածանցները միշտ էլ
 բառակազմական մեծ դեր են խաղացել հայոց լեզվում:

Պետք է ասել, որ Եղիշեն լավագույնս ու վարպետորեն է օգտվել հայոց
 լեզվի նաև բառակազմական այդ եղանակից՝ գործածելով հետևյալ վերջա-
 ծանցները -ալի <ալ+ի (իմանալի, ցանկալի), -ած (աւերած, կոտորած),
 -ակ (աւերակ, գիտակ), -ական (բժշկական, ծառայական), -ակի (յանկար-
 ծակի, վաղվադակի), -ային (աստուածային, ցամաքային), -այն (ամենայն,
 ժամայն), -այնի (ամարայնի, ձմերայնի), -այք <այ+ք (հրէայք, վանո-
 րայք), -ան (արգելան, շրջան), -անակ <ան+ակ (ժամանակ, փոխանակ),
 -անակի <ան+ակի (շուրջանակի, փութանակի), -անի (աւագանի, մատա-
 նի), -անոց <ան+ոց (դիտանոց, մենանոց), -անք <ան+ք (զարմանք,
 փորձանք), -աստ (ուրաստ), -ատ (խորխորատ), -աք (մոլաք), -աքան (աւե-
 տարան, կրակարան), աց (ինքնասաց), -ացի||ացիք <ացի+ք (եգիպտացի,
 քաղաքացի, ասիացիք), -ացու (ապականացու, պիտանացու), -աքար (կենդա-
 նարար, հացարար), -ալ (դիւրաւ, տաքնապաւ), -(ա)տք (աղեղնաւոր, սգա-
 ւոր), -(ա)քար (հեղաքար, տիրաքար), -(ա)գին (ահագին, տրտմագին),
 -(ա)գոյն (խորագոյն, ստագոյն), -եալ (կատարեալ, հանգուցեալ), -եայ (ամ-
 սօրեայ, պաշտօնեայ), -եայք <եայ+ք (քրիստոնեայք), -եան (յաւիտեան,
 Գաբեղեան), -ելի <ել+ի (ըմպելի, սիրելի), -եղ (ահեղ, շքեղ), -եղէն (լու-
 սեղէն, քարեղէն), -եղի (աղտեղի), -ենի (մայրենի, վայրենի) -ենք (Գաբե-
 ղենք), -երէն (պարսկերէն), -երօրդ (եւթներորդ, քառասներորդ), -եքին||եքեան
 (ամենեքին||ամենքեան, վեցեքին||վեցեքեան), -ծեա (ախտածեա), -ի (դա-
 ւարի, պղնձի), -իլ (տեսիլ), -իկ (անուշիկ, տոհմիկ), -ին (դիւրին, ստորին),
 -ինք (նախատինք), -իչ (արարիչ, սատակիչ), -իւ (սաստիւ, վաղիւ), -իցս (երի-
 ցրս, երկիցս), -իւղ (երկիւղ), -իւն (մնչիւն, ճարճատիւն), -իք (աւետիք, ընթ-
 լիք), -նի (զաղտնի, նախնի), -ոդ (ծնող, պատերազմող), -ոյ (զազանաբարոյ,
 վերոյ), -ոյք (աներևոյթ, անձանձրոյթ), -ոյին (ձերոյին), -ոյն (ողորոյն), -ոյց
 (հանգոյց), -ոյք <ոյ+ք (զահոյք, հաճոյք), -ով (ճեպով, փութով), -ոտ (կաս-
 կածոտ, ցաւոտ), -ոտի (մեռելոտի, սնոտի), -որդ (կցորդ, հաղորդ), -ովի (իւ-
 րովի), -ովին (գլխովին), -ոց (ամբոց, հնոց), -ոք (բարիք), -ու (աւարառու,
 վերակացու), -ուած (ընթերցուած, շինուած), -ուածք <ուած+ք (խառնուածք),
 -ութիւն (հաւանութիւն, պղծութիւն), -ուկ (գեղջուկ, յեղյեղուկ), -ուն (գնայուն,
 խօսուն), -ումն (ազդումն, հեղումն), -ունդ (ծնունդ), -ունի||ունիք (արքունի||
 արքունիք), -ուստ (կորուստ, փախուստ), -ուրդ (ժողովուրդ, խորհուրդ), -ունք
 (թիկունք, կրկունք), -ուց (վաղնջուց, առաւօտուց), -ուք (սակաւութ), -պան

¹⁰ Սա ցույց է տալիս, որ նախածանցների ստեղծման գործում հունարան դպրոցի ներկայա-
 ցուցիչների դերը շատ է զերազնահատվել, և այդ պատճառով էլ որոշ բառերի կազմութունը
 ցայսօր ճիշտ չի մեկնաբանվել:

(դռնապան, սենեկապան), -պէս (դառնապէս, փութապէս), -ստան (բուրա-տան), -պատիկ (երեքպատիկ), -ուշ (վաշելուշ, ընկալուշ), -բորդ (երկրորդ, չորրորդ), -տի (մանկտի), -ֆ (աղիք, մեղք, տուրք, փառք)....:

Այս վերջածանցները, որ հիմնականում գործուն ու կենդանի են նաև այսօր, բառակազմական միանման արժեք չունեն և, բնականաբար, տարբեր չափ ու քանակով բառեր են կազմում:

Ինչպես գրաբարում ու հայերենում ընդհանրապես, այնպես էլ նդիշեի գրքում արտակարգ բեղունությամբ աչքի է ընկնում հատկապես -ութին ածանցը, որով և 321 բառ¹¹ է գործածվել. ըստ որում՝ 133-ը (անկարգութիւն, բանասերկութիւն, գոհութիւն, երանութիւն, զուարճութիւն, թեթևութիւն, կրթութիւն...)՝ 1, 43-ը (այցելութիւն, բարեխօսութիւն, գողութիւն, թանձրութիւն, հիւանդութիւն, պայծառութիւն, փառասիրութիւն...)՝ 2, 29-ը (ամուսնութիւն, բարութիւն, թողութիւն, խոնարհութիւն, հեղութիւն, մկրտութիւն...)՝ 3, 16-ը (առատութիւն, դպրութիւն, խորամանկութիւն, յիմարութիւն, տրտմութիւն...)՝ 4, 15-ը (ազահութիւն, բժշկութիւն, երկայնութիւն, յարութիւն, քաղցրութիւն...)՝ 5, 12-ը (անմահութիւն, գերութիւն, ծանրութիւն, ուրացութիւն...)՝ 7, 9-ը (աստուածութիւն, զգուշութիւն, յայտնութիւն, նմանութիւն...)՝ 8, 9-ը (ազատութիւն, խռովութիւն, համբերութիւն, մանկութիւն...)՝ 10, 8-ը (անկարգութիւն, օրհնութիւն, բնակութիւն, պարտութիւն...)՝ 6, 6-ը (ամբաստանութիւն, երկր-պագութիւն, թագաւորութիւն...)՝ 11 անգամ....:

Նկատելի է, որ ինչքան մեծանում է -ութին ածանցով բառերի գործածության հաճախականությունը, այնքան նվազում է նրանց թիվը. ըստ այդմ էլ, ասենք, եթե 12 անգամ՝ 4 (օտարութիւն, գիտութիւն, իմաստութիւն, յաղթութիւն), 13 անգամ՝ 3 (արութիւն, խնդութիւն, ստութիւն), 14 անգամ՝ 4 (ամբարշտութիւն, պատրաստութիւն, բարկութիւն, սովորութիւն), ապա ավելի մեծ հաճախականությամբ գործածվել են մեկ կամ երկու բառ, ինչպես՝ առաքինութիւն՝ 21, խաղաղութիւն, ծառայութիւն՝ 22, ֆրիստոնէութիւն՝ 32, նշմարտութիւն՝ 33, փաշութիւն, իշխանութիւն՝ 38, զօրութիւն՝ 43 և բազմութիւն՝ ամենից շատ՝ 51 անգամ:

Նդիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գրքում համեմատաբար շատ ածանցավոր բառեր են կազմված նաև -ումն (մոտ 70 բառ՝ ազդումն, բեկումն, դղրումն, խօստակումն, շարժումն, վրիպումն...), -ական (ավելի քան 50 բառ՝ աղօթական, բնական, գրական, թուական, ծառայական, շինական, փրկական...), -(ա)ւոր (43 բառ՝ անտաւոր, բիւտաւոր, գիսաւոր, երկնաւոր, նենգաւոր, չափաւոր...), -(ա)գոյն (մոտ 40 բառ՝ բազմագոյն, համեստագոյն, մանկագոյն, ջերմագոյն, վատթարագոյն...), -անք (մոտ 30 բառ՝ արշաւանք, գարմանք, թշնամանք, մեծարանք, պարծանք, տուգանք, փորձանք...), -ունի|ունիք (դարձյալ մոտ 30 բառ՝ Արծունի, Արծունիք, Գնթունի, Գնթունիք, արհունի, արհունիք, Քաջբերունի, Քաջբերունիք...) ածանցներով: Սրանց հետ մեկտեղ կան նաև սակավ արտադրողական մի շարք ածանցներ, ինչպես՝ -ած, -ակի, -այն, -այնի, -ան, -անակ, -անակի, -անոց, -ատ, -ացու, -եակ, -եղ, -երէն, -իլ, -իցս, -նի, -ոյց, -օտ, -օտի, -ուկ, -պէս, -պան և այլն, որոնցով բնականաբար քիչ (մեկից մինչև վեց) բառեր են գործածված:

Եվ, այնուամենայնիվ, թե՛ խիստ, թե՛ սակավ արտադրողական, թե՛ շատ, թե՛ քիչ կենսունակ վերջածանցները համալրում են իրար և կազմում մի ամբողջական համակարգ, որը և հատկանշվում է գրաբարին հատուկ իրողություններով: Այսպես՝ Նդիշեի գրքում կան նաև վերջածանցներ, որոնք, լիովին զատված չլինելով իրենց սերող քերականական, առանձին դեպքում՝ նաև արմատական ձևերից, ոչ միայն բառակազմական, այլև քերականական-ձևաբանական իմաստ են արտահայտում և փաստորեն բառակազմական ու քերակա-

¹¹ Եվ դա այն դեպքում, երբ Աստվածաշնչում դրա համարաբար ու վայելքի համաձայն -ութին ածանցով 606 բառ է գործածված (տե՛ս Վարագ Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984, էջ 114—119):

նական ձևությոնների միջին տեղն են բռնում: Այդպիսի վերջածանցներից են, օրինակ, հոգնակիակերտ Դ-ն՝ առանձին (գիրք, փառք, միտք) և այլ ածանցների հետ, ինչպես՝ -այլ (վանորայք), -աւն (կտպանք, անարգանք), -ոյք (գահոյք), -իւն (նախատինք), -իք (կարծիք), -եֆից||եֆեան (բոլորեքին: բոլորեքեան), -ուած (խառնուածք), անցյալ դերբայի եւլ մասնիկը (ամբարձեալ, վշտացեալ, փախուցեալ), գործիականով ով (լիով, ճեպով), -աւ (ստիպաւ, տագնապաւ), -իւ (ճշմարտիւ, սաստիւ) վերջածանցները և այլն:

Այս ամենն ականջատորեն ցույց է տալիս, որ ածանցումը V դարում բառակազմական մեծ ու հզոր միջոց է եղել, որից և լավագույնս ու վարպետորեն օգտվելով՝ Եղիշեն ամենևին չի բավարարվել պատրաստի բազմաբանակ ածանցավոր բառերով, այլև հանդես է բերել ստեղծագործական մոտեցում կերտելով սեփական մի շարք ածանցավոր բառեր¹², ինչպես՝ անախտաւորութիւն (Ախեղիք միւր առողջացան զանախտաւորութիւն երկնաւոր—186», հ. 1, էջ 71), անառողջութիւն («...ախտացեալ էք յախտաւորութիւն անառողջութեան—172», էջ 72), անդուլութիւն (Աթանձրացոյց անդուլութեամբ գալաշ-տօն պղծութեան իւրոյ—12», էջ 80), անխաղաղաւք (Անհղեալ տագնապէր անխաղաղաւք կենօք.—6», էջ 85), անյազ («Պատրուճակք մի մեռցին անյազ—52», էջ 96), անորովայն (ԱՅնորեալ մոլորիք գկնի նորին խրատտուի...անորովայն դիւաց կերակուր մատուցանելով—37», էջ 97), բանտարգելիք (Ա՛հ հեռաստանէ եղեն վարդապետք միսթարիչք բանտարգելեացն—202», էջ 224), բնականունդ (ԱՅիշեցան նոցա, թէ գուցէ ոք ամենևին ի բնականունդ դաբկաց...—201», էջ 233), գերաւորութիւն (Ամանք զգերաւորութիւն արձակելով իբր յաղբերականաց հոսէին յաշաց իւրեանց—59», էջ 246), թանձրամտութիւն (Աճամեալ մղեցաւ թանձրամտութիւն նոցա—139», էջ 452), խորհումն (Աճրուէր և վատնէր զամենայն խորհումն նենգութեան—47», էջ 599), հինարար (<հն+ա+բար (Ա՛իլ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինարար յափրշտակելով—23», հ. 2, էջ 87), ձիւնեղէն (Աճնդարձակասուն բնակիչք ձիւնեղէն լերանց՝ եղեն բնակիչք դաշտաց—194», էջ 113), լայրաւոր («...մօտ առ մօտ խտացեալ իբրև զփայտահարս մայրաւորաց—118», էջ 127), մեծանոյց (Ա՛ր բնակեալ են յիւրաքանչիւր մեծանոցս—52», էջ 60), մոլեգնոտաբար (Ա՛ռեցոյց զմոլեգնոտաբար գողումն—83», էջ 202), վարագաբար («...գողէր առիւծաբար և յարձակէր վարագաբար—77», էջ 50), ցամաքագոյն¹³ (Աճրթայք հանէք զկապեալսն ի վերնատուն մի ցամաքագոյն—146», էջ 563) և այլն¹⁴:

Այսպիսով ավելի են շատացել Եղիշեի գործածած ածանցավոր բառերը, որոնք զանազան արմատների ու ածանցների համադրութիւն կազմելով և ձեւավառնական բազմաբնույթ կառուցվածք ունենալով՝ արտահայտվում են.

ա) նախածանց+արմատ կաղապարով, ինչպես անախտ (<ան+ախտ), անարգ (<ան+արգ), անբաւ (<ան+բաւ), աննանձար (<ան+հանձար), անվնաս (<ան+վնաս), անփորձ (<ան+փորձ), համագունդ (<համ+ա+գունդ), համագործ (<համ+ա+գործ), տգէտ (<տ+գէտ), տգեղ (<տ+գեղ), տարածամ (<տար+ա+ծամ), տարակոյս (<տար+ա+կոյս), առհաւարակ (<առ+հասարակ), բնդդէմ (<բնդ+դէմ) և այլն:

բ) նախածանց+արմատ+արմատ կաղապարով, օրինակ՝ անբամբաս (<ան+բամ+բաս), անաշառ (<ան+աշ+առ), անխաղաղաւք (<ան+խաղաղ+աւք), անկերակուր (<ան+կեր+աւ+կուր), աներկբայ (<ան+երկ+բայ):

գ) նախածանց+արմատ+վերջածանց կաղապարով, օրինակ՝ անաշխարհիկ (<ան+աշխարհ+իկ), անծամանակ (<ան+ծամ+անակ), անառուն

¹² Դա հաստատում է և «Նոր հայկազյան բառարանը», այդպիսիների համար վկայաբերելով միայն Եղիշեին:

¹³ Այդ բառը բացակայում է Նոր և Առանձն հայկազյան բառարաններում:

¹⁴ Զի բացառվում, որ սրանց մեջ լինեն նաև ուրիշների կողմից կազմված կամ առաջին անգամ գործածված բառեր:

($\langle$ ան+աս+ուն), անանցական ($\langle$ ան+անց+ական), անբանութիւն ($\langle$ ան+բան+ութիւն), առաջին ($\langle$ առ+աջ+ին), առաւելապէս ($\langle$ առ+աւել+ա+պէս), ընդունելի ($\langle$ ընդ+ուն+ելի), քերականութիւն ($\langle$ թեր+ա+հաւատ+ութիւն), վերաբեր ($\langle$ վեր+արկ+ու), տգիտաբար ($\langle$ տ+գէտ+ա+բար)..., այլն՝ անառողջութիւն¹⁵ ($\langle$ ան+առ+ողջ+ութիւն) և այլն:

դ) Նախածանց+արմատ+վերջածանց+վերջածանց կաղապարով, օրինակ՝ անխմատութիւն ($\langle$ ան+իմ+աստ+ութիւն), անժամանակեան ($\langle$ ան+ժամ+անակ+եան), անախտաւորութիւն ($\langle$ ան+ախտ+աւոր+ութիւն), առաջնորդ ($\langle$ առ+աջ+ին+որդ), առնաւայելայ ($\langle$ առ+հաւատ+իչ+եայ), ընդոստոցիչ ($\langle$ ընդ+ոստ+ոց+իչ)..., այլն՝ առաջնորդութիւն ($\langle$ առ+աջ+ին+որդ+ութիւն):

ե) Նախածանց+արմատ+արմատ+վերջածանց կաղապարով, օրինակ՝ անընչասիրութիւն ($\langle$ ան+ինչ+ա+սէր+ութիւն), անաշատութիւն ($\langle$ ան+աշ+առ+ութիւն), առաւելաբանութիւն ($\langle$ առ+աւել+ա+բան+ութիւն), առաջարկութիւն ($\langle$ առ+աջ+արկ+ութիւն) և այլն:

զ) Արմատ+վերջածանց կաղապարով, օրինակ՝ անաւոր ($\langle$ ահ+ա+ւոր), բարկութիւն ($\langle$ բարկ+ութիւն), գողաբար ($\langle$ գող+ա+բար), դառնապէս ($\langle$ դառն+ա+պէս), երկաթի ($\langle$ երկաթ+ի), զօրական ($\langle$ զօր+ա+կան), ժամանակ ($\langle$ ժամ+անակ), ժողովուրդ ($\langle$ ժողով+ուրդ), լեռնային ($\langle$ լեռն+ային), ծագումն ($\langle$ ծագ+ումն), կատարեալ ($\langle$ կատար+եալ), հանգիստ ($\langle$ հանգ+իստ), մայրենի ($\langle$ մայր+ենի), միջոց ($\langle$ մէջ+ոց), շողիւն ($\langle$ շող+իւն), պսակիչ ($\langle$ պսակ+իչ), վերուստ ($\langle$ վեր+ուստ), տոնմիկ ($\langle$ տոնմ+իկ), վտարով ($\langle$ վտար+ով), փայլուն ($\langle$ փայլ+ուն) և այլն:

է) Արմատ+վերջածանց+վերջածանց կաղապարով, օրինակ՝ ազնուականութիւն ($\langle$ ազնիւ+ա+կան+ութիւն), ախտաւորութիւն ($\langle$ ախտ+աւոր+ութիւն), գեղեցկագոյն ($\langle$ գեղ+եցիկ+ա+գոյն), թագաւորական ($\langle$ թագ+աւոր+ական), խորհրդական ($\langle$ խորհ+ուրդ+ական), պիտանացու ($\langle$ պէտ+ան+ացու), սիրելիութիւն ($\langle$ սիր+ելի+ութիւն), փախտական ($\langle$ փախ+ուստ+ական), ծակոտուած ($\langle$ ծակ+ոտ+ուած), ժամանակեայ ($\langle$ ժամ+անակ+եայ) և այլն:

ը) Արմատ+վերջածանց+վերջածանց+վերջածանց կաղապարով, օրինակ՝ մոլեգնոտաբար ($\langle$ մոլի+ա+գին+ոտ+ա+բար), խաւարչտին ($\langle$ խաւար+իչ+ուտ+ին), մշտնջենաւոր ($\langle$ մշտ+նջ+են+աւոր) և այլն:

թ) Արմատ+արմատ+վերջածանց կաղապարով, ինչպես՝ ակնկալութիւն ($\langle$ ակն+կալ+ութիւն), անաբեկեալ ($\langle$ ահ+ա+բեկ+եալ), ամսօրեայ ($\langle$ ամիս+օր+եայ), արիւնաբու ($\langle$ արիւն+արբ+ու), բարեմասնութիւն ($\langle$ բարի+ա+մասն+ութիւն), երկրպագու ($\langle$ երկիր+պագ+ու), գրկարդաց ($\langle$ գրի+ա+կարդ+աց), կերակրանք ($\langle$ կեր+ա+կուր+անք), խորագիտութիւն ($\langle$ խոր+ա+գէտ+ութիւն), շարշարիչ ($\langle$ շար+շար+իչ), սպառագինութիւն ($\langle$ սպառ+ա+գէն+ութիւն) և այլն:

ժ) Արմատ+վերջածանց+արմատ կաղապարով, օրինակ՝ ծննդագործ ($\langle$ ծին+ունդ+ա+գործ), խորհրդակից ($\langle$ խորհ+ուրդ+ա+կից), վերնատուն ($\langle$ վեր+ին+ա+տուն), կենցաղասէր ($\langle$ կենց+կենց+աղ+ա+սէր), մրկածին ($\langle$ մրուր+իկ+ա+ծին) և այլն:

ժա) Արմատ+վերջածանց+արմատ+վերջածանց կաղապարով, ինչպես՝ իմաստասիրութիւն ($\langle$ իմ+աստ+ա+սէր+ութիւն), սակաւապիտութիւն ($\langle$ սակ+աւ+ա+պէտ+ութիւն):

Բերված օրինակները ցույց են տալիս, որ սրանք նույն տեսակարար կշիռը չունեն և տարբեր չափ ու քանակով ածանցավոր բառեր են կազմում. ըստ որում՝ ամենից առաջ իրարից ավելի շատ տարբերվում են նախածանցավոր և վերջա-

¹⁵ Այսպիսի՝ ածանց+ածանց+արմատ+ածանց բաղադրիչներով կազմութիւնները խիստ հազվագեղ են:

ծանցավոր բառերը, որոնց ենթատեսակների մեջ, սակայն, գերիշխում են նախածանց + աւմատ եւ աւսատ + վերջածանց կաղապարով կազմութիւնները¹⁶։

Այսպիսով՝ V դարի նշանավոր պատմիչ Եղիշեն իր հանրահայտ «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» գրքում գործածել է իսկապես բազմաթիվ ու բազմատեսակ ածանցավոր բառեր¹⁷, որոնց կառուցվածքային կաղապարները նույնպես պարզ են դարձնում նրանց պատկերը եւ ցույց տալիս, թե ածանցները՝ նախածանցներն ու վերջածանցները միասին բառակազմական ինչ արժեք ունեն այնտեղ։

АФФИКСАЛЬНЫЕ СЛОВА В КНИГЕ ЕГИШЕ «О ВАРДАНЕ И АРМЯНСКОЙ ВОЙНЕ»

АЛЕКСАНДР МАРКАРЯН, ЛИДА ГУЛГАЗАРЯН

Резюме

Известный армянский историк и писатель V в. Егише в своей книге «О Вардане и Армянской войне» использовал около 4600 слов, из которых почти 1800 слов являются аффиксальными. Эти слова по характеру аффиксации, конечно, отличаются друг от друга и разделяются на три группы. Одну группу составляют слова, в которых аффиксы (или префиксы, или суффиксы, или префиксы и суффиксы) стали частью корня.

Другую группу составляют префиксальные слова, образованные в основном при помощи отрицательных приставок. И, наконец, третью и большую группу составляют суффиксальные слова.

Аффиксальные слова представляют многообразную и интересную картину и с точки зрения моделирования производных слов, разбор которых показывает, что Егише, мастерски пользуясь словообразовательным способом аффиксации армянского языка, обогатил тем самым лексику своего произведения.

¹⁶ Զգետք է, սակայն, մոռանալ, որ ածանցավոր բառերը կառուցվածքային-կաղապարային տեսակներից եւ ժամանակի ընթացքում տեղաշարժեր են կրում, եւ ըստ այդմ էլ, ասենք, երբեմնի ածանցավոր բառը (օրինակ՝ առակ, ամուսին)՝ պարզ, բարդ ածանցավոր բառը (օրինակ՝ անդադար, անխորհուրդ, միեւրոպէս) պարզ ածանցավոր բառ է դառնում կամ այնպես է պատահում, որ ածանցների ձուլմամբ (օր.՝ ոյթ+իւն>ուրիւն, ով+իւն>ովիւն) նրանց թիվն է պակասում։

¹⁷ Այստեղ նկատի են առնվում միայն անվանական ածանցներով կազմված բառերը։